ՄԱՆՈՒԿՅԱՆ ՍՈՒՐԵՆ

ԻՍԼԱՄԱԿԱՆ ԱՐՄԱՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ: ԱՌԱՋԱՑՄԱՆ ԵՎ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Իսլամական արմատականությունը Սիրիայում բավականին երկար պատմություն ունի: Այն ծագել է 20-րդ դարի 30-ական թվերին, երբ Եգիպտոսում ուսումն ավարտած սիրիական ուսանողները ներշնչվելով տեղական Մուսուլման-եղբայրների գաղափարախոսությամբ՝ վերադառնալով հայրենիք հիմնեցին իսլամիստական ակումբներ և միություններ:

1946 թ. այդ խմբակները միավորվեցին «Մուսուլման եղբայրների» կազմակերպության մեջ[1]: Մինչև Բաաս կուսակցության իշխանության գալը (1963 թ.), բացառությամբ Արաբական Միացյալ Հանրապետության գոյության շրջանը (1958-61թթ.), իսլամական կազմակերպությունը հանդիսանում էր սիրիական քաղաքական կյանքի ակտիվ դերակատարներից մեկը: Այն մշտապես ներկայացուցիչներ էր ունենում խորհրդարանում և մի շարք նախարարական կաբինետներում[2]:

Բաաս կուսակցության իշխանության գլուխ անցնելուց հետո ֆունդամենտալիստները տեղափոխվեցին ընդհատակ և գլխավորեցին բաասական վարչակարգի դեմ ուղղված մի շարք (1964, 1965, 1967 և 1973 թթ.) ելույթներ:

1976-ից Սիրիայում գրանցվեց իսլամական շարժման նոր վերելք: Բազմաթիվ սպանությունների թիրախ դարձան ալավի գործիչները: Իսկ 1979-82 թթ. երկրում, փաստորեն, ծավալվեց իսկական քաղաքացիական պատերազմ իսլամական արմատականների և բաասական վարչակարգի միջև:

Արմատական իսլամական շարժման հզորացման և ակտիվացման պատճառները, թերևս բազմաթիվ էին: Դրանք կարելի է բաժանել հետևյալ խմբերի:

1. *Գաղափարական.*[*]

Գաղափարախոսությունը առանցքային տեղ էր գրավում բոլոր նորանկախ պետությունների կյանքում: Սիրիան բացառություն չէր կազմում, և անկախությունից հետո իշխանության եկած երկրի քաղաքական էլիտան իբրև երկրի զարգացման գաղափարական հիմք ընդունեց ազգայնականությունը: 1963 թ. իշխանության եկավ Բաաս կուսակցությունը, որը Սիրիայի զարգացման հիմքում դրեց ազգայնականության արաբական սոցիալիզմի տարբերակը՝ Բաասիզմը: Հետագայում ազգայնական, բաասական լոզունգների նկատմամբ հիասթափությանն անխուսափելիորեն հետևեց բնիկ արաբական գաղափարախոսության վերելքը, քանի որ սիրիական վարչակարգին չհաջողվեց նրան համարժեք գաղափարախոսություն մշակել:

Բացի այդ իշխող վարչակարգի քաղաքական և տնտեսական անհաջողությունները կոտրեցին ժողովրդի հավատը 1963 թ. մարտյան հեղափոխության և 1970 թ. Ուղղիչ շարժման արժեքների նկատմամբ: Հռչակված գաղափարական դրույթները լոկ տեսական դրույթներ մնացին և կյանքի չկոչվեցին: Արմատական իսլամը ինչ որ չափավ փորձեց ներթափանցել առաջացած գաղափարական վակուումը:

2. *Տնտեսական.*

Տնտեսական ճգնաժամը ևս նպաստում էր հակակառավարական տրամադրությունների զարգացմանը և որպես հետևանք նոր «արդար, իսլամական կառավարման» գաղափարի առաջացմանը: Տնտեսական բնագավառում իրավիճակը Սիրիայում խրոնիկ բարդ էր: Դրան նպաստում էին ազգային տնտեսության անցումային և շուկայական հարաբերությունների անավարտ բնույթը :

Թեև Հաֆեզ ալ-Ասադը իր կառավարման առաջին տարիներին ձեռնարկեց երկրի տնտեսության ազատականացմանն ուղղված մի շարք քայլեր, սակայն դրանք չուղեկցվեցին գաղափարական վերափոխումներով: Գերիշխող սոցիալիստական հայացքները շատ դեպքերում խոչընդոտում էին տնտեսության նոր գործելակերպը: Որպես հետևանք պահպանվում էին զարգացման թույլ ներուժ ունեցող տնտեսական ինստիտուտները, մասնավորապես, խոշոր, բայց քիչ էֆեկտիվ պետական սեկտորը, նաև պետության չդադարող միջամտությունը ռազմավարական համարվող բնագավառներ, ինչը բերում էր երկրի տնտեսության էլ ավելի լճացմանը[*]:

Դրա հետ մեկտեղ, տնտեսությունում տեղի ունեցող համակարգային փոփոխությունների հետևանքով ավելացավ լյումպենների և պառապեր-

---

[*] Պատճառների դասակարգումը չի կատարված առաջնայնության սկզբունքով:

ների դասը, ինչն ավելացրեց ՍԱՀ խոշոր քաղաքների սոցիալական լարվածությունը: Իսկ հասարակության մարգինալացման հետևանքը դարձավ նաև քաղաքների բնակչության հոգեվիճակի բարդացումը, որը պարարտ հող էր ստեղծում ճգնաժամային իրավիճակի համար:

Իսրայելի հետ բախումները, մշտական պատերազմական վիճակը ևս չէին կարող չանդրադառնալ երկրի տնտեսական զարգացման վրա. պաշտպանության ծախսերը կազմում էին ՍԱՀ բյուջեի ծախսերի կեսը, ինչը ծանր բեռ էր երկրի տնտեսության համար:

3. *Դեմոգրաֆիական.*

Տնտեսական անկայունությունը ստեղծում էր նաև դեմոգրաֆիական խնդիրներ: Արագացող մոդեռնիզացիան զուգորդվում էր ուրբանիզացիայով: Սա իր հերթին ուղեկցվում էր գործազրկությամբ, և որպես հետևանք՝ ունեցվածքային տարբերությունների մեծացման և ապագայի նկատմամբ տագնապի առաջացմամբ, հատկապես երիտասարդության շրջանում:

Բնակչության աճի արագ տեմպերը հանգեցրին իսլամական և մասնավորապես արաբական երկրների բնակչության երիտասարդացմանը: 1970-ական թթ. բնակչության աճը կազմել է 3,4 %[4]: Իսկ Միրիայի վիճակագրության Կետրոնական վարչության տվյալներով 1980-ական թթ.-ին այն հասել է 3,7 %, ինչը հանդիսանում է ամենաբարձր ցուցանիշներից մեկն աշխարհում[5]:

Սա բավականին ազդեցիկ գործոն էր կրոնական արմատականության առաջացման համար: Հետազոտող Այուբին արմատական իսլամիզմն ուղղակի անվանում է «տիպիկ երիտասարդական ելույթ»[6]: Փաստորեն, ՍԱՀ բնակչության մեծամասնությունը 1960-80-ական թթ. 30 տարեկանից ցածր զանգված էր, որը և ավելի շարժունակ է և ազդեցության տակ ընկնող: Սրան գումարվում էր զբաղվածության պրոբլեմը, քանի որ տեղի էր ունենում կադրերի վերարտադրություն: Թեև աշխատատեղերի քանակը մնում է անփոփոխ, կրթական համակարգում մասնագետների պատրաստման տեմպերը շարունակվում էին մնալ բարձր: Բազմաթիվ ինժեներներ, բժիշկներ հնարավորություն չունեին աշխատանք ստանալու պետական հիմնարկություններում, իսկ մասնավոր հատվածի աշխատատեղերի քանակը սահմանափակ էր:

4. *Ներքին քաղաքական.*

Իսլամական արմատականության առաջացման ու զարգացման վրա ազդող ներքին քաղաքական խնդիրների շարքում կարևորվում են՝ լեգալ ընդդիմության բացակայությունը, մայրաքաղաք Դամասկոսի և հյուսիսային քաղաքների՝ Հալեպի ու Համայի միջև եղած պատմական հակամարտությունը և սուննիների ու ալավիների միջև գոյություն ունեցող հակասությունը:

Այն պայմաններում, երբ երկրում բացակայում է ընտրական ազատությունը, զարմանալի չէ, որ ֆունդամենտալիստական կազմակերպությունները, որոնք առաջ էին քաշում հասարակ ժողովրդին հասկանալի կոչերը, գրավում էին ընդդիմադիր դաշտն ամբողջությամբ: Այն բանից հետո, երբ 1963 թ. բոլոր ավանդական սիրիական կուսակցությունները լուծարվեցին, իսկ Բաասին լոյալ տրամադրված կուսակցությունները 1972 թ. միավորվեցին ԱԱՃ-ի մեջ, միաժամանակ գրկվելով անկախ գործելու իրավունքից, փաստորեն, իսլամական ֆունդամենտալիզմը դարձավ միակ մասսայական գաղափարախոսությունը, որի միջոցով հնարավոր էր արտահայտել դժգոհությունը ներկա իշխանությունների կառավարման նկատմամբ: Իսլամական կազմակերպությունները ստեղծում էին քաղաքական կյանքի մասնակցության պատրանք, իսկ իսլամական լոզունգները՝ դառնալով պրոպագանդայի միջոց, զգալի ժողովրդականություն էին ապահովում ընդդիմադիր քաղաքական առաջնորդներին: Քաղաքական դաշտում Բաասին վերապահված որոշակի ֆորմալ մենաշնորհը թույլ չէր տալիս անցկացնել քաղաքացիական հասարակության հիմքերի ձևավորմանն ուղղված բարեփոխումներ, որոնք կարող էին դառնալ ներքին քաղաքական լարվածության թուլացման գործոն: Բացի այդ, քաղաքական ազատականացման գործընթացը արգելակվում էր ալավիական էլիտայի կողմից, որը պարզ պատկերացնում էր, որ այդ դեպքում ստիպված կլինի երկրի իշխանությունը զիջել տնտեսական և դեմոգրաֆիական առումով գերիշխող սուննիներին՝:

Կարևոր դեր ունի նաև Դամասկոսի և Սիրիայի հյուսիսային քաղաքների միջև եղած հակասությունները: Անկախության առաջին տարիներին դա արտահայտվում էր նրանով, որ այս քաղաքները շարունակում էին սերտ առևտրական կապերով միավորված լինել ոչ թե Սիրիայի ներքին տնտեսության հետ այլ Իրաքի հետ: Բացի այդ հստակ տարբերվում էին այս երկու հատվածների սոցիալական պատկերները: Իսկ 60-70-ական թթ. առևտրական հակասությունները վերափոխվեցին Բաասի և կրոնական ընդդիմության միջև պայքարի:

Այս ամենը ուղեկցվում էր նաև կոռուպցիայի ու բյուրոկրատիայի տարածմամբ և հզորացմանը, երբ առաջացած իշխանական համակարգի ճգնաժամային տարրերը նույնպես ազդում էին արմատական իսլամական տրամադրությունների առաջացմանը:

5. *Կոնֆեսիոնալ.*

Սիրիայում իսլամական ֆունդամենտալիզմը ունի մի կարևորագույն առանձնահատկություն: Դա նրա ընդգծված հակաալավիական բնույթն է: Բաաս կուսակցության իշխանության գալը նախանշեց ալավիական գերիշխանության սկիզբը Սիրիայում: Ալավիները, կազմելով երկրի բնակչության 12 տոկոսը միայն, իսլամիստների կողմից հայտարարվե-

ցին հերետիկոսներ և ցածր խավի ներկայացուցիչներ: Գրավելով իշխանությունը՝ ալավիներն իրենց ձեռքերում կենտրոնացրին տիրապետության բոլոր լծակները: Չնայած նախարարների, խորհրդարանի անդամների և Բաաս ղեկավարության մոտ 60 տոկոսը երկրի բնակչության մեծամասնությունը կազմող սուննիներն էին, սակայն բարձրագույն սպայական կազմի 90 տոկոսը ալավիներ էին, ինչով և ապահովվում էր նրանց ազդեցիկության աստիճանը, քանի որ բանակը սիրիական իշխանության հիմքն էր հանդիսանում:

Իշխանության կորստի շոկային արձագանքը հետզհետե վերափոխվեց ալավիների նկատմամբ կտրուկ անհանդուրժողականության զգացումով, որին հետևեց իսլամական գաղափարախոսության և սուննի ազգայնականության յուրօրինակ սինթեզի առաջացումը: Դրա կրողը դարձան հենց իսլամիստները:

Սա է պատճառը, որ հատկապես ալավիական համայնքի, և ոչ թե իշխանությունների ներկայացուցիչներն ընդհանրապես, դարձան իսլամիստների գլխավոր թիրախը: Հենց սուննի-ալավիական հակամարտության վկայությունն է 1964 և 1982 թվերի ապստամբությունների հակաալավիական բնույթը, ինչպես նաև նրանց ճնշման դաժանությունը:

Բացի այդ, բաասական նոր քաղաքական էլիտան հանձն առավ հասարակության արմատական աշխարհիկացմանն ու իսլամի հետ իշխանության երկփեղկման գործընթացին: Սա հակասում էր իսլամիստների գաղափարներին և բնականաբար առաջացրեց նրանց զայրույթը:

6. *Արտաքին քաղաքական.*

Արտաքին քաղաքական գործոնները ամենակարևորներից էին իսլամական շարժման առաջացման համար: Պետք է մոռանալ, որ հենց Իսրայելի հետ 1967 թ. պատերազմում արաբական երկրների կրած պարտությունը դարձավ ազգայնական, աշխարհիկ գաղափարախոսությունների, այդ թվում՝ բաասիզմի և նասերիզմի խաթարման և արմատականության զարգացման պատճառներից մեկը: Ընդհանրապես, արտաքին քաղաքական գործոնի մասին քաջ գիտակցում էին նաև սիրիական նախագահը և նրա շրջապատը: Սրանով է պայմանավորված այն, որ նրանք իրականում չէին ձգտում խաղաղության հասնել Իսրայելի հետ, քանի որ նմանօրինակ պայմանագրի կնքումը կարող էր դիտարկվել որպես պարտվողական քայլ՝ և դառնալ արմատական ընդդիմության ակտիվացման պատճառ[9]: Բացի այդ, խաղաղության պայմանագրին դեմ էին նաև սիրիական գործարար շրջանակները, որոնք չէին ցանկանում Արևմուտքի մուտքը սիրիական շուկա, քանի որ դա կարող էր կործանարար հետևանքներ ունենալ սիրիական արդյունաբերության համար: Պետք է մոռանալ նաև, որ 1976 թ. իսլամական ելույթների սկզբնավոր-

ման պատճառներից մեկը հանդիսացավ Լիբանանյան պատերազմին սիրիական զորքերի ոչ միանշանակ մասնակցությունը[10]:

Մեծ ազդեցություն ունեն նաև Եգիպտոսում և Իրանում տեղի ունեցած իրադարձությունները, Սաուդյան Արաբիայի քարոզի ազդեցությունը, ինչպես նաև Իրաքի և Հորդանանի կառավարությունների գործողությունները:

7. *Հոգեբանական.*

Սեփական քաղաքակրթության «ոսկե դար» վերադարձի արևելյան ժողովուրդների ձգտումը երկար թերագնահատվում էր գիտնականների կողմից, սակայն այդ զգացումը միշտ էլ շատ ուժեղ է եղել, ինչը հաստատվում է շատ ժամանակակից տենդենցներով: Այս ձգտումն ուղեկցվում է արժեքային համակարգի ճգնաժամով: Արևմուտքի մշակութային ազդեցությունը ցավագին է ընկալվում արաբական ժողովուրդների կողմից, իսկ պետությունների համար ճգնաժամային իրավիճակում այդ զգացումը միշտ ավելի սուր է դառնում: Տեղի է ունենում հին արժեքների փլուզում, իսկ նոր համակարգային որակ ունեցող կառույցները նույնպես ներմուծվում են արևմտյան ուժերի կողմից, ինչը չի կարող չհանգեցնել պատասխան ռեակցիայի, որն արտահայտվում է սեփական իսլամական ավանդական արժեքների ընդգծմամբ: Իսկ քանի որ եվրոպական մոդեռնիզացիայի բերած բարիքները շատ հաճախ ստեղծվում են շատ նեղ հատվածի համար, իսկ բնակչության ճնշող մեծամասնությունը մնում է աղքատության շեմին, ապա պարզ է, որ նորամուծություններից դժգոհության նոր ալիք է առաջանում: Սրա հետևանքը դառնում է հին, ավանդական արաբական, ինչպես նաև կրոնական արժեքների իդեալականացումը և նրանց հասնելու ձգտումը:

Այսպիսով իսլամական արմատականության առաջացման և հզորացման համար գոյություն ունեն մի շարք գործոններ, և Սիրիային բնորոշ է դրանց բարդ համակցությունը: Ցնվազեցնելով այլ գործոնների ազդեցությունը՝ ընդգծենք, այնուամենայնիվ, մի քանիսը, որոնք մեր կարծիքով առավել կարևոր են Սիրիայի համար՝ գաղափարական վակուումի լրացում, արտաքին ուժերի ազդեցություն և Մուսուլման եղբայրների կողմից միակ ռեալ ընդդիմության դերի ստանձնում երկրի քաղաքական կյանքում: Իսկ ամենակարևոր գործոն կարելի է համարել սիրիական իսլամիզմի հակաալավիական էությունը:

MANUKYAN SUREN

RADICAL ISLAMISM IN SYRIA

(Summary)

The activization of radical Islamism in Syria was taken place in 1976-82. There was a number of the factors, which can be divided into the following groups: ideological, economic, demographic, confessional, internal, external, psychological.

All the factors are equally influential but it is necessary to allocate such as filling of ideological vacuum, influence of external forces and assignment of a role of unique legal opposition in political life of Syria. And as the most important factor is anti-alawi essence of Syrian Islamism.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. A.Hinnebusch Raymond, Authoritarian Power and State Formation in Ba`thist Syria: Army, Party, and Peasant, 1990, p.279.
2. Abd-Allah, Unar F. The Islamic Struggle in Syria, Berkeley, 1983.
3. Рынки Ближнего Востока (Условия внешнеэкономической деятельности) М., 1997, с.24.
4. IDB Summary Demographic Data for Syria из U.S. Census Bureau, International Data Base. http://www.census.gov/ipc/www/idbnew.html
5. Zisser Eyal Clues to the Syrian Puzzle // The Washington Quarately, 23-2, Spring 2000, p. 85.
6. Ayubi N.N.M. The Politics of the Militant Islamic Movements in the Middle East // Journal of International Affairs, 1982/83 vol 36 No 2, p.280.
7. Robinson Glenn E., Elite Cohesion, Regime Succession and Political Instability in Syria // Middle East Policy, VolumeV, Number 4, January, 1998.
8. Е.Я.Сатановский, Израиль в мировой политике: вероятные стратегические противники и стратегические партнеры, М, 1991, с..56.
9. Zisser Eyal, Appearance and Reality: Syria's Decisionmaking Structure // MERIA.
10. R.Hrair Dekmejian, Islam in Revolution. Fundamentalism in the Arab World, Syracuse, NY, 1995, p. 108-109.